<u>Հավելված N 12</u>

<u>ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ</u>

(հարկիրճ շարադրանք)[1]

1. ՈԼՈՐՏԸ

ՀՀ Քննչական կոմիտեի լիազորություններն են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով իր իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ նախաքննության կազմակերպումը և իրականացումը: Որպես միչդատական վարույթ իրականացնող մարմին՝ ՀՀ քննչական կոմիտեն սերտ փոխհամագործակցում է իրավապահ մյուս մարմինների հետ, մասնավորապես՝ հետաքննության մարմինների, ՀՀ դատախազության հետ: Դատախազությունը հսկողություն է իրականացնում միչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ քննչական կոմիտեն՝ որպես նախաքննություն իրականացնող մարմին պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք հայտնաբերվի և ենթարկվի պատասխանատվության: ՀՀ քննչական կոմիտեի քննիչները քրեական գործի պատշաճ քննությունն ու դրա արդյունավետությունն ապահովելու նպատակով կատարում են օրենքով իրենց վերապահված բազմաթիվ քննչական գործողություններ՝ հարցաքննություններ, խուզարկություններ, զննություններ, առգրավումներ, անձանց կամ իրերի ճանաչումներ, քննչական փորձարարություններ, նշանակում են տարաբնույթ փորձաքննություններ և այլն: Քրեական գործերի նախաքննության ընթացքում վարույթ իրականացնող մարմինը պարզում է նաև հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները, որից հետո դրանք վերացնելու և կանխելու նպատակով համապատասխան մարմիններին ներկայացնում է միջնորդագրեր: Բացի այդ քննչական կոմիտեն զբաղվում է հանցագործությունների քննության մեթոդիկայի ուսումնասիրությամբ, ձեռնարկում է միջոցառումներ՝ քննության դրական փորձը քննչական պրակտիկայում ներդնելու ուղղությամբ: Բացի այդ՝ քննարկում և լուծում է ստացված դիմումներն ու բողոքները: Այս ամբողջ գործունեության վերջնական արդյունքը՝ քննության բազմակողմանիության, լրիվության, օբեկտիվության և արդյունավետության, մարդու և քաղաքացու իրավունքների, հիմնարար ազատությունների, անձնական անձեռնմխելիության և մյուս իրավունքների պաշտպանության ապահովումն է, ինչպես նաև նախաքննության ժամկետների անհարկի ձգձգումների բացառումը, պետությանը և քաղաքացիներին պատճառված վնասի վերականգնման ապահովումը, ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու հարցերի լուծումը, կոռուպցիոն երևույթների ծագման, դրանց պատճառների և նպաստող պայմանների բացահայտմանն ու դրանց կանխմանն ուղղված գործողությունների իրականացումը, որը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագրից:

[1] Ոլորտային քաղաքականության ողջ համառոտ շարադրանքը չպետք է գերազանցի 6 էջի սահմանները:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ քննչական կոմիտեն իրականացնում է «ՀՀ քննչական ծառայություններ» ծրագիրը, որը հանդիսանում է վարչական բնույթի ծրագիր:

Ծրագրի վերջնական արդյունքն է՝ Քրեական վարույթներով նախաքննության իրականացում, քրեական վարույթների ընթացքի լուծում

Վերջնական արդյունքին հասնելու Կոմիտեի կողմից իրականացվող գործունեության հիմնական նպատակն է քրեական գործերի քննությունը, որի շրջանակներում կարող է անհրաժեշտություն առաջանալ նշանակել մի շարք փորձաքննություններ, դատավարական փաստաթղթերը ներկայացնել թարգմանության, իրավական օգնության համար կազմել և ուղարկել միջազգային հարցումներ՝ համապատասխան երկրի պաշտոնական լեզվով: Բացի այդ քննչական կոմիտեի գործունեության ընթացքում քննիչների վերապատրաստման և պատրաստման գործընթացն ապահովելու համար նրանց ներգրավվում են մի շարք դասընթացներում, համապատասխան վերապատրաստման ծրագրերում, մասնագիտական պատրաստում անցնող ունկնդիրներին տրամադրվում է կրթաթոշակ, ինչպես նաև աշխատանքներ են տարվում ՀՀ քննչական կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավման ուղղությամբ:

4.ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ստորև ներկայացված են ֆինանսների բնագավառի 2025-2027թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.
2025 թվականի համար 20593083.1 հազ դրամ,
2026 թվականի համար 18286301.7 հազ. դրամ,
2027 թվականի համար 18502085.9 հազ. դրամ: